



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 30

ՀԱՐԱՐԻ

24 ՄԱՐՏ 1907

Կ. ՊՈԼՏՈՑ ՀԱՄԱՐ		ԳՍԻՍՈՒՍՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղրշ	Տարեկան	54 Ղրշ	Տարեկան	42 Ֆր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է:

ՄԵՏ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ Ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բուլղարացի Սրբուհիքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու:

Կ. Պոլիս, Պաղլի-գարու, Օոզգի-Պաֆ (Խովհր-եփենի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

آ. آصاوریان) شرکت صریه مطبعه — باب طای جاده سنده نو ص ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Աչի Հասսէսի քիւ 52

Հատոր 40 փայտ



[Զեւոյի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի]
 Բրանզամայն մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ.

ՀԱՅԹԱՅԹՈՒՋ ԿԱԶՄ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւոր զործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՆՈՒՅՆ ՊԱՏՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 :

ՍԿԻՏԱՐ

Զարը Պօյու, Թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզողլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 30

ՇԱՐԱԲ

24 ՄԱՐՏ 1907

ԱՆՀԵՏԱՑՈՂ ԴԵՄՔ Մ'ԱԼ

«Հանրագիտակ» մամուլին յանձնուած էր արդէն, երբ լուր առինք թէ՝ Փուկը շաբաթաթերթին Հիմնադիր-Արտօնատէրը՝ ՆԱՍԲԱՐԱՋՈՒՄ ԷՖ. ԱԼԱՃԱՃԵԱՆ մեռած է :

Մեր ծերունազարդ պաշտօնակցին մահուան անակնկալ այս լուրը կը ցնցէ զմեզ, մենք որ երիտասարդներ ենք, մենք որ լրագրական ասպարէզին անձանթները ու անփորձներն ենք : Համբարձում է՞ք. Ալաճաճեան ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ԶՈՐՍ երկար տարիներու լրագրական պատմութիւն մը կը տանի իր հետ, օրինակելի յիշատակ մը ձգելով իր երիցագոյն որդւոյն Սիմոն Էֆէնտիի, որ վերջին տարիները կ'օգներ իր ծերունի և յոգնած հայրիկին գրական և լրագրական աշխատութեանց :

Մեծայարգ և պատկառելի լրագրակետին կենսագրութիւնը հրատարակուեցաւ արդէն օրը օրին օրաթերթերու մէջ, սակայն կ'ուզենք մենք ալ մեր պարտականութիւնը ամուլ չի թողուլ իր յարգելի յիշատակին :

Համբարձում է՞քէնտի Ալաճաճեան, որչափ տիպար խմբագրապետ՝ նոյնչափ ալ գուրգուրոտ հայր մըն էր : Իր ընչ տանեկան կեանքը մօտէն դիտողներ կըմայլէին անոր ազնիւ և բարի կենակցութեան վրայ : Շրջապատուած իր չորս հարազատներէն, կ'ապրէր Սկիւտարի բարձունքը եկեղեցիին քովիկը, սրտով ալ անոր մօտիկը :

Պզտիկէն իր զաւակներուն սրտին մէջ դրած էր հայր մը յարգելու և պատուելու անուշ և սրբազան պարտա-

կանութիւնը, և անոնց տուած էր այնպիսի կրթութիւն մը՝ որով կը պսակուեիր իր վերջին օրերուն, երբ տղաքը անմեղ գառնուկներու պէս իր շուրջը կը բոլորուէին ու կը վայելէին ծերունազարդ իրենց հօր բարի խրատները:

Համբարձում էֆէնտի Ալաճաճեան դեռ չատ մը երկար տարիներ կրնար ապրիլ քաջուած անդորը կեանքով մը, երբ անողոք յանկարծամահը չի գար չի խլեր զինք իր սիրելիներու թեւերէն:

Լրագրութեան մէջ իր անունը թերթով կը յիշէին, այնպէս որ երբ «Փունջ»ը ըսէին՝ Ալաճաճեան էֆէնտին ըսել էր, այնքան ծանօթ էր ինք թերթով, զոր կը վարեր երկար տարիներ:

Անգամ մը իր լուսանկարը ուզեցի «Հանրագիտակ»ի առաջին էջը զարդարելու համար:

— Յորեւանիս կուտամ կը դնես, հիմա պօշ բան է, տղաս ըսած էր ինծի:

Այնքան կը խրտչէր ցուցամուկութենէ և փառքէ:

Ինքն իրեն ուղղութիւն մը ունէր, ինչպէս նաև յատուկ հայերէն մը ու ոճ մը լրագրութեան մէջ: Շարժէ շարժ զրած խմբագրականները, մէկ մէկ լուրջ և խորախորհուրդ ուսումնասիրութիւններ՝ դիտողութիւններ էին մեր կրթական, եկեղեցական և բարեսիրական տեսակ տեսակ սխալանքներու, ծուռ ընթացքներու վրայօք, որոնք կը լափուէին ընթերցողներու լուրջ դասակարգին կողմէ:

— Իմ թերթս ուղողը թող կարդայ, կ'ըսէր ան խօսակցութեան միջոցին, ես կը գրեմ իմ գիտցածս և իմ համոզումներս, բայց դիտեմ որ օրուան «նորեախայները չեն կարդար, հազ չեն ընէր... թող չի կարդան, ես ալ իրենց գրածներէն համ չեմ առնէր, բան չեմ հասկնար...:

Իրօք ալ Համբարձում էֆ. չէր հանէր օրուան գրականութեան:

Անէքթոտ մըն ալ իր յիշատակին:

Օր մը չի մ' գիտեր ինչպէս եղաւ, հինգ հարիւր սկի առաջարկեցի իրեն «Փունջ»ին համար:

Ալաճաճեան փոխուեցաւ, զուարթ գէմքը մութ ամպեր պատեցին գողցես, պահ մը աչքերը խոշոր խոշոր բացած ինձ նայեցաւ, և լրջօրէն խօսք առնելով,

— Ինծի նայէ եավրում, անգամ մ'ալ ատանկ առաջարկ մը ընելու ըլլաս, բարեւ Ասծուբարինս կը կտրեմ քենէ... իմ «Փնջիկ»ս մեռնելէս վերջ կ'ուզեմ որ Սիմօնիկս հրատարակէ:

Եւ հիմա որ բազմամեայ լրագրագետը ոչ եւս է, փափաքելի է որ երեց որդին՝ Սիմօն էֆ. Ալաճաճեան իր հայրիկին գոհացում տայ, յարգէ աւոր ըղձանքը և շարունակէ թերթը, այնպէս՝ ինչպէս ան վարեց 44 երկար տարիներ:

Խմբագրութիւնս երկնային միութարութիւն կը հայցէ՝ Այրի Տիկնոջը, Սիմօն էֆ. Ալաճաճեանի և միս երեք եղբայրներուն, և իր սգածեալ ցաւակցութիւնը կը փութայ յայտնել այս տխուր առթիւ:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

* * *

Համբարձում էֆ. Ալաճաճեանի մահուան առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ ընտանիքին ղրկած ցաւակցական նամակին պատճենը:

«Լուսահոգի Համբարձում էֆենտի Ալաճաճեանի մահը մեզ ալ վշագին զգացմանց կը մասնէ: Այսչափ երկար ժամանակ անբասիր կեցողով եւ միտքով ու բերնով եւ գրչով հանրութեան օգին հետեւեցաւ:

Սգաւոր այրւոյն եւ վշակիր զաւակաց կը մաղթեմ երկնային մխիթարութիւն եւ առաջապարգեւ յաջողութիւն ու հանգուցելոյն հանգիստ յաւիտեական»:

ՄԱՂԱՔԻՍ. ՊԱՅՐԻԱՐԻ

ՏԽՈՒՐ, ՇԱՏ ՏԽՈՒՐ

Հեռուէն, սոսկում պատճառող ձայներ
յուզարկաւորութիւն մը կը կանխեն:

Ճանրանին է, մեր դրան առջեւէն պիտի
անցնին:

Կը սպասեմ:

Խաչ մը, երկու տիրացու և երկու քա-
հանայ, խաչախնկներու պէս արագաքայլ,
մեռել մըն է որ կը քաշկռտեն, կը տանին:

Այդ մեռելի մտաւոր — ժամինը, զբը-
կուածներունը — յիշեցնել կուտայ ինծի այն
ապրանքի մտաւորները՝ որոնց վրայ մուցը-
ւած է գրուիլ: Posa piano:

Ի՞նչ դժբաղդ էակներ կան եղեր աշխար-
հիս վրայ:

Կրօնքի այդ ներկայացուցիչներուն ան-
տարբերութիւնը չէ որ կը յուզէ զիս:

Ընդհակառակը:

Աղքատ մեռելի մը առջեւէն ակամայ զա-
ցող քահանան որ ստակ պիտի չառնէ, բնա-
կանաբար ուրախ չկրնար ըլլալ, և ա՛յս՝ մահ-
ուան ազդած դառնութեան կը նպաստէ:

Հարուստին առջեւէն գացող տէրտէրը
դեռ բաւական վարպետ չէ երես թթուեցը-
նելու արհեստին մէջ՝ շահելիք քանի մը մէ-
ծիտիէին պատճառած բերկրալիւր ակնկալու-
թիւնը ծածկելու համար սեւ փիլոնին տակ,
և ահա՛ ասիկայ է որ բնաւ չներդաշնակիր
մահուան խորհրդաւոր սարսուռին:

Հարուստ ապրիլ կը փափաքիմ, ամէն
մարդու պէս, բայց պիտի ուզէի չքաւոր
մեռնիլ — և այս իղձս ապահովապէս անի-
րագործելիներէն չէ — թող չտալու համար
Քրիստոսի այդ դարավերջիկ աշակերտներուն
որ, դազաղիս առջեւէն մրմուռով, վաստա-
կի գոհունակութենէն ծնած ժպիտին աշ-
խարհականորէն տեղաւորեն իրենց թաւ մօ-
րուքին տակ:

Ամէն անգամ որ հարս մը տեսած եմ որ
չէ կրցած ճերմակ շրջագեղատ մը ունենալ և
ստիպուած է, հէ՛գ աղջիկը, նարնջենիի ծա-
ղիկները — իր խորհրդաւոր վկայականները —
սփռել գոհունակ կերպասի մը վրայ, որ, ա-
ւա՛ղ, մետաքսէ ալ չէ, միշտ յարսօսը յուզ-
ուած ըլլալս կրնամ յիշել:

Բայց ինչ որ այս յուզարկաւորութեան
տեսայ, ադէկէ աւելի ցաւալի, ադէկէ աւելի
դառն, ադէկէ աւելի սոսկալի էր:

Երեւակայեցէք — եթէ երբեք երեւակա-
յելն անգամ կարելի է — յուզարկաւորութիւն
մը ... առանց յուզարկաւորի: Մեռելին առ-
ջեւէն չորս հոգի կրօնքը կը ներկայացնեն:
Ժողովուրդը ըսուած բանէն ոչ ոք:

Իբրեւ յուզարկաւոր, սոսկ սեւ դազա-
ղին սեւ շուքը աշնանային պայծառ արեւին
մէջ:

Ասանկ հոգիս տակնուվրայ ընող բան տե-
սած չէի. դուք ալ տեսած չէք:

Ի՞նչ ահաւոր, ի՞նչ սրսկալի պարագայ
մըն է այս, և ի՞նչ գէշ գաղափար կուտայ
մարդուն վրայ, կեանքի վրայ, աշխարհիս
վրայ և մանաւանդ մարդկութեան վրայ:

Տիւմա մը պէտք է որ կարենայ այս
նիւթին վրայ գրել:

Ես, միայն զգացի:

Եւ մարդկութիւնը ներկայացուցած ըլլա-
լու անզուգական պատիւը ինքզինքիս տալու
համար, յամրաքայլ դազաղին ետեւէն գացի:

Տուներուն հետաքրքիր պատուհաններէն՝
դուցէ շատեր վրաս խնդացին:

Օ՛հ ... ապուշները:

Ձեռն գիտեր թէ, կեանքիս մէջ, առաջին
անգամ ըլլալով, գոնէ տասը վայրկեան ան-
խառն գոհունակութեան ի՞նչ ըլլալը գիտցայ:

Յ. ԱԼՓԻԱՐ

ԱՐԵՒԵԼԲ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղա-
քական: — Բաժանորդագրութիւն՝ տարե-
կան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառնե-
րու համար 108 դրշ. և օտար երկիրներու
համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բաման-
տօ փողոց: ԱՐԵՒԵԼԲ հրապարակ կ'ելլէ ա-
մէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակու-
թեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լու-
րերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԶՈՒԱՐԹ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԵԶՈՎԲՈՍ ՄԵ

[ՊԱՏՄՈՒԱԾՔ]

Եզովբոս Յոյն առակախօսին մեռնելէն դարեր վերջը, երբ տակաւին սպասաւոր նեղելը իր գործած օրըստօրէական մեծամեծ աւերներովը կ'ուզար ահուսարաստի սրտիւնը քաղաքակիրթ աշխարհի, երբ դեռ Տիւկին Հէնրիք Պիլլըր Սթօուի այնքան աշխարհահռչակ գործը՝ Աղբար Թովմասի սնակը մութ աշխարհէն լոյս աշխարհ ելած չէր, ահա այս ժամանակամիջոցներուն մէջ չեմ գիտեր ո՛ր ազգէն հարուստ մէկ մը կ'ապրէր Մ. քաղաքին մէջ։ Թէեւ կարծուածէն շատ աւելի հարուստ, բայց իր տարօրինակ բնաւորութեան մէկ բերումով հասարակ քաղաքացիի մը կեանքը կ'ապրէր իր կնոջ, երկու զաւակներուն (մէկը նորածին) և սպասաւորին հետ։

Մեր մարդուկը շատ ճշգրտապէս մէկ մըն էր, Պարոնեանի Մերկեր աղային պէս, անանկ որ գրեթէ ամէն օր Եւրոպացիի յատուկ ճշգրտահաշիւովը մը մի և նոյն ժամուն կ'ելէր՝ կը ճաշէր, գործի կ'սկսէր և ցերեկին շատ մը բաներ ընելէ վերջ ... կը պառկէր (ի՛նչ խօսքը փոխենք), առանց սակայն հիւր ընդունելու կամ հիւր ըլլալու հարկին ներքեւ գտնուելու, քանի որ շատ մատաւան էր կը վախնար այնպէս, ինչպէս մուկը՝ կատուէն։

Հակառակ իր՝ շատ թիթիւ բնաւորութեան տէր մէկ մը եղած ըլլալուն, ծառան ալ — որուն անունը պատշաճութեան համար կիրակոս պիտի կոչենք հոս — ծայր աստիճան կատակասէր և պատրաստաբան էր (հազըր ճէվապ), անանկ որ տէրոջը կողմէն իրեն եղած որոտընդոտս պատգամները և կամ սոխի մը չափ կծու յանդիմանութիւնները հասարակ զուարճալիքի պէս բան մը կը թուէին անոր։

Օրին մէկը սակայն մօտակայ թաղէ մը իր հեռաւոր ազգականներէն երեք հոգի կ'այցելէին։ Մարդը այս անակնկալին առջեւ այլ յայլմէ եղած յանկարծակիի կ'ուզայ և հոգ-

ւով մարմնով կրակուրոյ կարած՝ կ'սկսի իր ամբողջ բարկութեան մաղձը սպասաւորին գանկին մէջ թափել, պատրուակելով թէ՛ ուշ եկար, կանուխ գացիր, սա բանը ըրիր, միւսը չըրիր, բարեւի չի կեցար, և այլ ասոնց նման մնտի ու անտրամաբանական պատճառաբանութիւններ։ Իսկ ասոնց ամէնուն փոխարէն ծառան յարմար առիթի մը կ'սպասէր, որպէս զի տարիներէ ի վեր իր լսած յանդիմանութիւններուն և կերած ծեծերուն համար ազէկ դատ մը տայ իր տիրոջ, գէթ աստիճանով իր էրած սիրտին չոր միտիթարանք մը տուած պիտի ըլլար։ Եւ ահա բարեպատեհ առիթը հասած էր, ու կիրակոս մէկ վայրկեանէն միւսը կ'սպասէր, որպէս զի իր տէրը հիւրերուն դէմ ազէկ մը խայտառակէ։

X

Այդ վայրկեանը շատ չուշացաւ սակայն։ Ինչպէս վերը ակնարկեցինք, մարդուկը երկու զուակ ունէր, որոնցմէ մէկը որ հազիւ թէ գիշեր ցորեկ չորս տարեկան կար, իր հօրը շատ սիրելին ըլլալուն, անոր գիրկէն չէր զատուեր։ Այս անգամ ալ մինչ տանտիկինը հիւրերը վայրկեան մը առաջ ճամբելու համար խոհանոցին մէջ սուրճ եփելու կ'աշխատէր, պզտիկն ալ իր հօրը գիրկէն սկսաւ յայտնի նշաններով հասկցնել թէ՛ ինք շատ ներսը կենալու չէր դար։ Հայրը՝ կէս մը բարկութենէն, կէս մըն ալ ամօթէն (եթէ երբէք ամէնալ գիտէր) կանչեց ծառան և «չափուկ կէօթիւր շունու պագ» ըսաւ, այս լեզուով խօսեցաւ, իր տաճկերէն գիտնալը հիւրերուն ալ հասկցնելու համար։ Ծառան յիշեց իսկոյն Եզովբոսի վարմունքը Քսանթոսի հանդէպ և այս բանը բարեպատեհ առիթ մը սեպելով՝ պզտիկը տարաւ երդիկին տակ, պառկեցուց, ինքն ալ վեր ելաւ, լող-քարը գլտորեց ... բայց ճայն մը լսուեցաւ։ Տնեցիները ամբողջ սարսափահար դուրս վազեցին և անեղազոյ ճիչերով պատասխանեցին այն անակնկալ աղմուկին, քանի որ իրենց աչքերով իսկ տեսան պատահարը, մանկիկը այդ հսկայ բռնին ծանրութեան տակ ճգմուեր, անշնչացիր էր։

Երեւակայելու է մեր մարդուկին ահագնադժոգ բարկութիւնը. իր բերնէն կրակուրոյ կը ժայթքեցնէր, հազար անէծք, լու-

տանք և հայհոյանքներ կը տեղար խեղճ ծառային գլխուն, բայց եղածը եղած էր, և պատշաճութիւնն ալ կը պահանջէր որ տունը այսչափ մը տոկին ու վրայ ընելէ վերջ ալ եւս չախաւոր լիզու մը գործածէր իր ծառային հանդէպ ու ալ անոր հետ այնպէս չի վարուեր, ինչպէս յամառ կենդանիի մը հետ: Իսկ ծառան, իբր թէ անտեղեակ ըլլար իր իսկ ձեռքովը գործած ոճիրէն, կատարեալ պաղարիւնութիւնով մը ըսաւ. « մէյէր պէօլէ օլա՛ . . . »:

×

Հազիւ թէ առջի անդորրութիւնը դարձեալ վերանայատուած էր տան մէջ, հիւրերը այս անակնիւ պատահարէն կարի յուզուած՝ խօսք առին և մեկնելու թոյլատուութիւն խնդրեցին տանտիրոջմէն, բան մը, որուն առերես գոգոն թէեւ, բայց իներքուստ շատ համամիտ էր այս վերջինը, անանկ որ առանց խօսքերնին երկրորդելու միջոց տալու (որպէս զի մի գուցէ քանի մը ժամ ալ չի փութին չի նստին) անմիջապէս կանչեց ծառան և ըսաւ. « չափուգ կիթ, ֆէնէլէրի եազ »: Իսկ ծառան, որ իր ամբողջ վրէժը տիրոջը հասցուցած այս առաջին վերանայութեան հատուցած ըլլալու գոհունակութիւնը չունէր, ուզեց երկրորդ գաս մըն ալ տալ անոր:

Պատմութիւնը միշտ կը սորվեցնէ թէ այդ դարուն (դարը միտքէն ելաւ) մէջ գործածուող լապտերները թուղթէ էին: Արդ, Կիրակոս այս երկրորդ առիթէն ալ օգտուելով՝ խոհանոց կը վազէ, երեք լապտերները մէկանց կը կախէ և լուցկիով մը կ'սկսի ամէնն ալ այրել, բոցերը կը շառնան, թանձր մուխ մը, խանձի հոտ մըն է կը ծաւալի և կ'ողողէ տունը: Իսկ կինը՝ որ այս միջոցին բակը կը գտնուէր և հանգիստատեք եղած էր այս սոսկալի տեսարանին, անմիջապէս « հրդեհ, հոսէ՛ք » կը պոռայ: Տեսցիները ընդոտ վար կը վազեն և տաշահար կը դիտեն եղածը, թուղթէ լապտերներէն ափ մը մոխիր մնացեր էր գետինը, կազի հեղձուցիչ հոտ մըն ալ քարածուեր էր սենեկին մէջ: Հազար կըշտամբանք, բիւր պուշտուք ամէն կողմէ, բայց որո՛ւ հոգ, եղածը եղած էր, և Կիրա-

կոս կատարեալ անտարբերութիւնով մը բարեւի կեցած էր ու այս աղէտին ալ պատահախոնը արդէն իսկ պատրաստած. « աղա, ֆէնէլէրի եազ ախին, եազարմ, տահա նէ՛ եափայլմ »:

×

Կը մնար երրորդ և վերջին վրէժ մըն ալ լուծելիք: Ծառան որ շատ աղէկ սոված էր « առէա իւչ քէրէ » առածը, կը խորհէր թէ արդեօք ի՞նչ միջոցներով կարելի էր իր տիրոջը խաղ մըն ալ խաղալ, քանի որ մարդուկը հիւրերու դէմ ծառայ պատժելու սովորութիւնը չունէր և ինք ասանկով շատ աժան կազատէր իր պոչը: Այս պահուն երբ տանտիրինը լապտեր գտնելու համար փնտռուաքի եղած էր դրացնոյր, այս ուղղութեամբ հիւրերուն երեսէն ազատելու համար, տանտէրը դարձեալ ձայնեց և հրամայեց իր ծառային ըսելով. « չափուգ կիթ, այագ գապըլարը տէճնտիւր »:

Օ՛ր, Կիրակոսի ուղածն ալ այս էր, ինք որ այս երկրորդ հրամանները շատ կը սիրէր, փութով գնաց, օճախը վառեց, սան մը ջուր դրաւ վրան, ջուրը եռալուն պէս ժողվեց փսկոյն կոշիկները, և դրաւ սանին մէջ: Երբ աղէկ մը կակուղցան, դուրս հանեց և բաւական դժուարութիւնով ամէնն ալ մէկիկ մէկիկ քէրս դարձուց, այսինքն ներքանները երես և երեսներն ալ ներքան ըրաւ: Այս գործողութիւնն ալ լմնցնելէ վերջ տարաւ զանոնք և իրենց տեղերը շարեց, նոյն այս պահուն արդէն փոխ առնուած լապտերները վառուած էին և հիւրերը մեկնելու համար տան երկրորդ յարկին սանդուխներէն վար կ'իջնէին: Երբ երեք հիւրերը կոշկատեղին հասան, այս անգամ անոնք ալ զայրացան և իրաւունքով, քանի որ մնասը ուղղակի իրենց կը վերաբերէր, բայց աւա՛ղ որ եղածը եղած էր և Կիրակոս անոնցմէ աւելի իրաւունք ունեցած ըլլալու դիմադրութիւնով մը կ'աղաղակէր. « Ալլա՛հ Ալլա՛հ, այագգապըլարը տէճնտիւր տէճնտիւր մի, տահա նապըլ տէճնտէրիլէր իմիչ »:

Պատկեր . . .

ՍԵՄԵԼԻԿՍ.



ՍՏԵՓԱՆ ԱԿԱՑԵԱՆ

Artiste peintre—ténor

ՈՐ ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ՑԵՐԵԿՈՅԹԻՆ «ՔԱՌՄԷՆ» Ը ՊԻՏԻ ԵՐԳԷ

ԿԾԾԻ ՈՒ ԾԵՐՈՒՆԻ

ԿԱՆՈՒԱԾԱՏԵՐ ՄԸ

Նազելի ու մանկամարդ կնոջը հակառակ դիվին, տարիքոտ մարդուկ մ'է ամուսինը, Մաթիկ աղան, բայց հասոյթառու կաշուածառէր մը, հիւանդկախ, զորս օրը անգամ մը տունէն դուրս կ'ելէ, ցմռնները սեփրիս անկիւնը կծկտած, աղտոտ, աղտոտ կը հաղայ, շունջը դարչելի կը հոտի, ձեռքերը կը դողդղան, պղտիկ անկարեւոր բաներու խիստ կը բարկանայ, միշտ սպասուհին կ'առակէ, խոհարարին կը հայհոյէ, զաբզալաքններուն հետ ժամերով կը սակարկէ, գեղանի տիկնոջը Սիրարփիին երեսին վայրենիներու պէս հառաչող ձայնով մը կը պօռայ, մէկ հատիկ սիրասուն զաւկին Նւփիմէին աւելորդ զարդերուն համար սիրտը կը դողայ, վերջապէս մայր ու աղջիկ, խոհարար ու սպասուհի խօսք մէկ են ըրեր կարծես՝ ամէն օր պօռացնելու, բարկացնելու, այն աստիճան որ՝ օր մը խեղճ մարդուկը յանկարծամահ պիտի ընեն, կնոջը չուղած բանը, խեղճ տիկնոջը տարիներով սուգ պիտի բռնէ, որբւայրի մնալուն ինչան սեւեր պիտի հագնի, որտիկ թախծոտ նեղութիւնը վանելու համար, իրեն խնկարկողներուն աղաւտ համարձակ պաշտօն պիտի տայ . . . :

— Օ՛ֆ, Նւփիմէս, կամոցուկ՝ դառն չեշտ մը դնելով ձայնին մէջ, այս ի՞նչ դառն տաղտկալից վիճակ է մերինը, ո՛չ տուններնիս հիւր կուգայ, ո՛չ հիւր կ'երթանք, սա ձըմեռուան նախանձելի գիշերները, որ Բերայի ամէն կողմ խրախճանութիւն, խինդ և ժըպիտ, մեր տունը սգաւորի տուն է դարձեր, ո՛չ պարահանդէս, ո՛չ թատրոն, նստինք ու նստինք քիթ քիթի, սանկ նայէ անուշիկ աղջիկս, փիս փիս կը խուկայ, եթէ տուններնիս երիտասարդ մ'ալ գայ, ան ալ վռնտելու կ'աշխատի չար նախանձէն . . . :

— Այո՛, մամաս, շատ իրաւացի էք, մեր կեանքը աղքատներու վայել կեանք մ'է, հարստութիւն ունինք, վայելել ալ գիտենք, բայց կապուած կաշկանդուած մնացեր ենք,

ինչ ընենք ճակատագիրնիս է, համակերպիլ պէտք է: Երանի՛ թէ սա հայր ըլլալիք նահապետական մարդը չ'առնէիր, ես ալ ձանձրացայ, քեզի ինծի հետ ամէն օր կուլ: Վա՛յ ծուռ նստեցար, փողոցին դուռը շատ կեցար, ո՛հ, անտանելիին անտանելին է մեր այս կեանքը . . . :

— Չէ՛, չէ՛, անկարելի բան է որ քեզի հօրդ պէս տգեղ, տգեղ բնաւորութեամբ մէկու մը տամ, կուղէնէ ամբողջ տունը ոսկիով սազէ շտկէ, աչքիս անգամ չերեւնար: Այս մարդուն հետ ամուսնացած ատեններս բարեկամուհիներս շատ վշտացան, բայց ինչ և իղէ գիտակցութեամբ ըրի . . . : Երիտասարդ ըսածդ ալ, կնոջ մը համար եթէ երեսը նայիս սիրտդ բացուելու է . . . :

— Մամա՛ս, հայրս գիշերը բերնէն փախցուց թէ՛ քեզ պիտի ամուսնացնեմ . . . :

— Ձգէ՛, դուն ալ, իր գտածն ալ իրեն նմանող կոշտ մարդ մը, դրամ ունենայ, հարուստ ըլլայ, ի՞նչ կուղէ ան թող ըլլայ, ինծի ալ ըսաւ, բայց երեսին պօռացի թէ ես ատանկ տգեղ տարիքոտ տեսիս տեղը մարդուն աղջիկ չեմ տար, չիմացա՞ր վերի սենեակէն խօսածներս: Այս խօսքիս վրայ էր որ վայրենիներու պէս ոռնացող ձայնով մը պօռաց, կանչեց թէ իմ խօսքս պիտի ըլլայ . . . :

— Բայց, մամա՛ս, ես ատանկ հիւանդկախ, հօրս պէս տարիքոտ փիս մարդ կառնեմ, սեւուլիկ կատուններու ձագին կը նմանի, ոտքս գետինը կը դարնեմ, ուղածին չափ հայրս թող պօռայ կանչէ, ես ուղած, սիրած տղաս պիտի առնեմ . . . :

— Նւփիմէ՛, արդէն Գոստեանէն ուրիշ մարդ տուններնէս ներս կարող է մտնել, հայրդ միայն ան կը պատուէ, օղիով մեզէն քիթը բերանը կը խօթէ, ի՞նչ ընելը չի գիտեր որ քեզի մէջը վրայէն ձամբէ . . . :

— Մամա՛ս, քանի մեր տունը գայ, ես ծակէ ծակ կը փախիմ, երեսս չ'ցուցնելու համար, դուն ըզես, շունի տեղ անգամ չես դնիր . . . :

— Նւփիմէ՛ս, անշուշտ, քաղաքավարութեան, կնոջական փափուկ շարժուճեւերէ հասկցող մարդ չէ որ հասկնար ու մեր բռնած նախատալից ձեւերէն մէյ մալ մեր տանը սեմէն ներս ոտք չէր դնէր, ասանկ մար-

գերը կոչանալով վաճառելու է որ՝ անոնց հետ գլուխ ելնես ... :

— Մամա՛ս, (թեւը հրելով), սա անցնող երիտասարդը ինչպէ՞ս է ... :

— Եւփիմէ՛, վառկա՛ծ շուն, գործ մ՛ուշիս հետը անպատճառ, տի՛ք, տի՛ք, հոս կը նայի, անկարելի բան է որ անծանօթ մէկը այդչափ խնդում երես հոս նայի, շիտակը ըսելով ալ գեղեցիկ, չիք ու վայելուչ երիտասարդ է, ազնուական կալանքըրի մը հովը կայ վրան, կ'արժէ ասանկները սիրել, կեցցէ՛ ճաշակդ ... , կը ծափահարեմ թեկնածուդ ... :

— (Եւփիմէ խո՛ր հառաչ մը քաշելով ու թափթփած բռնեցով), քանի որ սիրելի մամաս, հաւնեցար, շիտակը ըսեմ որ այս տղան հոգիքիս պէս կը սիրեմ, ի՛նչ կ'ըլլայ ըլլայ, անպատճառ պիտի առնեմ, գիտեմ որ, սիրելի մամաս, ինծի համամիտ ես, բայց ուզածին չափ հայրս թող հակառակի, վը՛ղ կուգայ ինծի ... :

— Բայց Եւփիմէս, այս տղան ի՛նչ գործով արդեօք կ'զբաղի ... :

— Մամա՛ս, վաճառականի մը քով գըրազիր է եղեր ... :

— Եւփիմէս, հայրդ չըլտէ, գրազիրն՝ իր աչքին պարզ ուռախ մէ՛, ուշախ մարդուն աղջիկ կուտա՛յ, մինչեւ որ փեսայ ըլլալիքին հարուստ ըլլալը չ'գիտնայ, աղջկան անուն անգամ չ'ի տար։

* * *

Մաթիկ աղայ. խոր թունէն սթափեցաւ խզդուելու աստիճան հագաց, քովի թքամանը թքաւ. օ՛ֆ, բո՛ւֆ, օհօ՛, օհօ՛, օհօ՛, «էօլիեօրըմ, կէպէրիեօրըմ, նէ սէնին ումուրընտա տըր, նէ՛ օնըն»։ Օ՛ֆ սա մախաբիս ցաւն ալ ո՛ւրկէ բուսաւ, վո՛ւշ եքերը տուր, ապ ի՛նչ չառփրնքը է, նորէն բռնեց սատկելիքը, ա՛յ գլուխս ցաւէն կը ճաթի կոր, հոգիս բերանս կուգայ կոր, չեղամ մեռնիմ, ծօ Գէորգ, սա տօքտօրը կանչէ՛ ... :

Ու տօքթօրն եկաւ, տարեկանը կանխիկ առած բժիշկն ալ ձանձրացած երթալ գալէն, այսօր՝ գլուխս, վաղը՝ սիրտս, միւս օր՝ ըստամոքսըս, մախաթս, ոսկորներս, կուրծքս, չըմնալիք, անբուժելի հիւանդութիւններ։

Կռահելով միանգամայն բժիշկը, որ Մաթիկ աղային կեանքը վառնգուած, երկու կամ մէկ ամիսի չափ հազիւ հաղ կրնայ ապրիլ, ու ինքը գործէն չմնալու համար, բըժըկական խորամանկ ձեւակերպութեամբ, Մաթիկ աղային հիւժած մարմնոյն չորս կողմը քառորդ ժամի մը չափ, «խակնօսքի» քնելէն վերջ։

— Մաթիկ էֆէնտի՛ս, մէկ ամիսի չափ Ֆրանսական հիւանդանոցը պառկելնիդ անհրաժեշտ է, վարժ հիւանդապահներու արամադրութեան տակ, մանաւանդ ելեքորաբուժական գործիքներու միջոցաւ կարելի պիտի ըլլայ բուժել ձեր ոսկրածուծային հիւանդութիւնը, որուն հետեւանք են բո՛ւր ձեր տկարութիւնները, ե՛թէ չ'երթաք, գիացած եղէք որ վախճանը գէշ պիտի ըլլայ ... :

Մաթիկ աղայ որ իր կեանքը պաշտոյ մ'եղած էր, վարպետորդի բժշկին խօսքին անսալով հիւանդանոց երթալու կը պատրաստուի ... :

Մեկնած պահուն՝ տիկինը կուգայ, կը պլլուի Մաթիկ աղային դմբուկած երեսին, ու փայտի պէս կոնծած վզին կեղծ համբոյրներ կը դրօշմէ, աւելի գօգօթներու յատուկ համբոյրներ քան ամուսնական սիրոյ անկեղծ յայտարարութիւններ ու հրաժեշտ տալով մէկմէկու, կը բաժնուին այր ու կին։ Ալ կը մեկնի խեղճ Մաթիկ աղան, աչքերը գեղանի կնոջը դէմքին կառչած, ուրկէ չէր կրցած ոչ մէկ բոպէ հեռանալ, վախնալով որ իր մեկնումն անվերադառնալի կ'ըլլայ։

Հիմա տիկինը ուրախ, օրհորդը դուարթ ու խանդավառ, երկուքն ալ աղտոտ ու ինքնագլուխ էին։

Ամուսինը մեկնելէն վերջ՝ չուտով սիւպիլմեով և անուշահոտ օճառով մէկ երկու երեք չորս անգամներ տիկինը կը լուսացուի, գիտէ՛ք ինչու. ամուսինը դէմքը համբուրած ըլլալուն համար։ Յետո, սկսաւ խորունկ խորհրդածութեանց մէջ ը՛կղմիլ մտովին, ու այս անել կացութեան ելքի ճամբայ մը գտնել։

Գիտէ՛ք թէ ամուսինին վիճակը յիշաւի ծանր էր, պատճառն ալ ինք եղած էր, բայց տգէտ ամուսինն՝ այս մասին անգիտակից էր, իր գեղեցիկ և սպիտակ մարմինը ամբողջ

Մաթիկ աղային ոսկորները ծծած քամած էր, որպէս կը քամէ տղրուկն արիւնը:

Տիկին Սիրարփի, մանկամարդ ու չքնաղագեղ կին մը, հազիւ քսան և ինը տարեկան, բոլորի ճերմկոտիկ դէմք, թուխ հարուստ վարսեր, հրապուրիչ ննուշիկ բերան, կեռասագոյն չրթներով, թաւշեայ վառվռուուն աչքերով տիկին մը, ամբողջ հրապուրիչ ելեքտրականութիւն մը: Գեղեցիկ և իրմէն վար տարիքով երիտասարդներուն հոգի կուտայ: Տիկին Սիրարփին պէս թէ գեղանի, և թէ խորամանկ կիներ հագուադրուտ կ'ըլլան: Տիկինն իր անունին պէս՝ սիրածը Յուսիս արեւին պէս կ'այրէր, չը սիրածն ալ՝ Օգոստոսի արեւին պէս արեւահար կ'ընէր: Մաթիկ աղան իր յառաջացեալ տարիքին մէջ կեանքի ու սիրոյ արեւհարութեան տխուր ախտէն վարակուած էր:

Սիրարփին պէս իրենց պզտիկ տարիքին մէջ կնոջական խորամանկութիւնները սորվող աղջիկներու ծնողքները միշտ բարձր հարուստներու կնութեան տալ կուզեն իրենց աղջիկները, առանց իրենց զաւակաց ու առնոց ամուսին ըլլալիք մարդերուն տարիքի համեմատութիւնը նկատի առնելու:

Մաթիկ աղան Courtier մ'էր արհեստով, որուն երեսէն կալուածներու տէր եղած էր, ու առեւտրական հրապարակին վրայ իբր պատուաւոր միջնորդ մը ամէն վաճառականներէ գնահատուած էր: Մաթիկ աղան իր ամուսնութեան մէջն ալ նոյն պաշտօնին մէջ հարուստ մնաց ...:

Գեղանի տիկինն ալ իր ամուսինը իբրեւ նշանաւոր courtier մը կը դաւանէր, և այս դաւանումին արդիւնքն էր որով Եւփիմէն աշխարհք եկած էր, որպէս զի ամուսնոյն հարստութեանը ժառանգորդ ըլլար այդ վաւաշոտ աղջիկը՝ հակառակ իր ծաղկատի հասակին, այդքան ծայրայեղօրէն սիրամոլ ըլլալուն, ճիշդ մօրը հոգեբանութիւնն ունէր: Սիրուիլ ու սիրել, հագուել, ուտել ու խըմել, այս էր երկուքին ալ, մօրն ու աղջկան կեանքի նշանաբանը:

Տիկին Սիրարփի շատ խելացի էր արդէն իր աղջիկներութեանը, խորհած էր արդէն առաջուց որ եթէ համեստ դասակարգի մը պատկանէր, չքեղ կեանք մը վարելու համար Մաթիկ աղային պէս ապուշ մը վընտ-

ռելու էր անշուշտ, որպէս զի քթէն բռնէր անոր ուղնուծուծը ծծելու, և թէ քսակը պարպկու, անկէ անդին ինք գիտէր իր ըրածը, ամէն երիտասարդ իրեն համար կազմ ու պատրաստ էր, ու ամենէն ալ գաղտուկ ու ծածուկ համը կ'առնէր. — կնոջական հրաշամոտութիւն —:

* * *

Յրտասարսուռ գիշեր մ'էր այն գիշերը, սառնաշունչ հով մը ու կծու փուք մը ամբողջ մարդկային մարմինը կ'ասղնտէր: Ուժգին շառաչումներով Մաթիկ աղային տանը դուռն է որ կը չալուի, սպասուհին խորքունէն սթափելով՝ կ'արթննայ ու դուռը կը վազէ բանալու, մի՞ գուցէ Եւփիմէն գիշերուն պարահանդեսէն վերադարձած ըլլար:

Բայց ահա քառք մ'է որ կը յանձնուի իրեն՝ տիկնոջը յանձնուելու համար, ու կը մեկնի զրաբերը:

Սպասուհին շուտափոյթ տիկնոջն անկողնոյն սենեակը կը վազէ քառքը յանձնուելու համար, քայց ինչ մեծ յուսախարութիւն, ոչ ոք կը գտնէ ...:

Գեղանի տիկինը այդ գիշեր կիսաշխարհիկ օթեւաններէն միոյն մէջ հիմեցեան աշխարհին հնչտանքի մթնոլորտին մէջ կ'օրօրուէր, ու բնութեան պահանջը կ'զոհացնէր ...:

Մինչ մեծն «courtier» Մաթիկ աղան անդրաշխարհիկ կեանքը ընդգրկած էր այդ ցուրտ գիշերը, ամուսնական կեանքին՝ այս ցուրտ իրականութեանը պէս ...:

ԱՐԱՄ Ն. ԳԱՐՈՒՃԻՆԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԻՆ ՕՐԵՐ

Պուէս Խաչատուր Միսաքեան եւ իր ժամանակակից իմացականին վրայ հայեացքներ.

Գ Ր Ե Ց

Տ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

Այս պատմական ու բանասիրական գործը, որուն շատինց կը սպասուէր, լոյս տեսած է այս օրերս Սադաեան տպարանէն: 140ի չափ ամփոփ էջերու մէջ՝ կը պատկերացունէ 19րդ դարու թուրքահայ գրականութեան և երեսելի անձերու գոյնզգոյն նկարագիրը, ծանրանալով զլիսաւորապէս Պուէտ Խաչատուր Միսաքեանի վրայ, որ այդ անձերուն ամէնէն կարկառուններէն էր իւրեւ բանաստեղծ-փիլիսոփայ:

Կը ծախուի Կ. Պոլիսի բոլոր գրավաճառներուն քով:

Գին 7 1/2 դրշ.

Մ Ս Ա Կ Ե Ր Ն Ե Ր Ը

[ՃԱԼԱՃՈՒԼԱ ՅՕԴՈՒԱԾ]

Միսերը անմերձենալի են . . . :

Այո՛, միսերը անմերձենալի են այն օրէն ի վեր, երբ մասվաճառները մէկ մէկ ֆուտ հագած ձեռքերնին բանթալօններն գրպանները, Հավանայի բուռօն բերաննին՝ իրենց կրպակներուն առջեւ կայնած ծանուցին թէ՛ միսը քսան եւ չորսեմ վար չեն կրնար քալ. . . :

Տօքթ. Խնդիրեան բոլոր ուժովը՝ զահրէ կերէք կը պողայ իրեն դիմող հիւանդներուն, մինչ ասդին կայ առողջներու ահագին թիւ մը, որ միս կուզեն, միս կուտեն :

Միսը աննդարար է կըսեն ամէն անոնք՝ որոնք վարժուած են մէկ նստելուն չորս թաթ փւլպաստի նետելու : Միս չուտեմ նէ չեմ կշտանար կըսեն այն կարգ մը պողազավէրները, որոնք միսին աղեկը ձեռք ձգելու համար Ղալաթիա, Բերա, Չարչի պոյին կը հովուեն ու ծրար ծրար կը կրեն, իբր թէ բուրդիւ և կամ մետաքս ֆիստանցու մը ըլլար : Հիմա՛ :

Միսերը անմերձենալի են . . . :

Սակայն պէտք է գիտնաք որ, և կարծեմ չգիտցող չիկայ, միսը կուտուի այն չորս քոտանիներուն, որոնց ոտքերուն սմբակը երկուքի բաժնուած է : Բայց կան տեսակ մը մարդիք ալ, մանաւանդ կիներ՝ որոնք միսը կ'ուտեն ոչ թէ միայն սմբակը երկուքի բաժնուած կենդանիներուն, այլ և հինգի . . . : Ինչպէս մարդունը :

Մարդու միս ուտելը, — չեմ կերած, բայց ուտողները հաւաստեն թէ — չատ անուշ է :

Երբ միս ուտել կըսեմ, անշուշտ կը հասկընաք թէ, փւլպաստի, փալապ, խրգարքմա ըսել չեմ ուզեր, այլ բարոյապէս միս ուտել մը կայ մեր մէջ, որ կը նշանակէ բամբասանք : Եւ գիտցէք որ կիներ կան մեր մէջ, որ անոր ատոր միսը, փառնապաք խրվորներէն աւելի համով կը սեպեն ու անով կը սնանին :

— Միսը տաքն և չորսի է ելեր . . . :

Որու հոգ, Աստուած լեզուներնուն և չենեներնուն չիլիին ոյժ պարգեւէ :

Մեծ պահքը, որ ինքնին պահեցողութեան եօթը շաբաթները կը ներկայացնէ, միակ բեռիօսն է մսակերութեան, այսինքն բամբասանքին : Կիներ բան գործ ընելու պէս, այս շաբաթներուն, իբր թէ «բարի պահք գայ վրադ» ի կը պարտկին տունէ տուն, և ամէն օր կրակարանին շուրջ բոլորուած միս կ'ուտեն :

Գաղափար մը տալու համար թէ՛ ի՞նչ ըսել է միս ուտել և կամ բամբասանքը մեծ պահք օրով, նկարարեմ ձեզ կիներու լոճնա մը իրենց բուն խօսակցութիւնով :

* * *

Տան մը յօսուլուիս սենեակներէն մին, վարագոյրները ձութ ձերմակ, սէտիրին ծածկողը կէռիմ կէռիմ քօփուլանմիւ եղած, մէջտեղը պախրու կրակարան մը և հոս հոն չորս հինգ տիկիներ, ամէնքն ալ մէկ մէկ ձեռագործով զբաղած, որ մէկը հիւր, որ մէկն ալ տունիներէն : Վարպետ բամբասողները մինչեւ որ ձեռքերնին աշխատութիւն մը չունենան չեն կրնար իրենց պաշտօնը լիովին կատարել :

— Իմացա՞ր . . .

— Ի՞նչը . . .

— Թագուհիցան էրիկը պիտի ձգէ եղեր . . .

— Բէք ալ աղէկ կընէ կոր, թող երթայ ձգէ, եռամուռճախը էրիկ չէ՞ եւ . . . Խապիրթօի ֆըչի . . .

— Քա ամա իրեն ըսինք քի քեզի ուղուն բան չէ տէյի նէ, խենդ ելաւ քի իլլէ ըլլայ տէյի . . . հիմաճուկ ալ թող առնէ նաաի . . .

— Կեցէք քի ըսեմ, կ'ըսէ ուրիշ կին մը քիթի ակնոցը ձեռքը առնելով, ինծի կուգայ քի, ատ կէնճը պախալին վրայի տունը նըստող տէլիխանլըին հետ հիօ պիյօ ունի եղեր

տէ, անոր համար երկը աչկին գէշ կերեւայ
կոր եղեր ...

— Քա չէ՛ ... վրան բարի ... աչկը
բացաւ երկը տեսաւ, չէ քուրուկ չէ մը-
սեր ... ես աղեկը դիտեմ ...

— Աղեկ կըսես ամա, սէվտա ըսածըդ
պաղա ֆուռքէթայի պէս մարդ կուխուն
վրայ թաշըմիշ չընէր քի էլ ալէմը տեսնայ,
ո՛վ գիտէ ի՞նչ ֆըռըլտախը տօլամպաճներ
ուռնին ...

— Ինծի նայեցէք, կ'ըսէ ուրիշ կին մը,
նստատեղին չորս մատ խախտելով, տիրո հի-
մա ծան չէի հաներ կոր, իյուռուքէմիկենց
պալաղին համար ալ ատանկ ըսին ամա,
գիտես ես, երկը ուշ վախիթ, սիրող քիւ-
մէսէն դուրս քաշեց ...

— Էյ հա, անորինը կէօզ կէօրէ պան էր,
էրիկը չարչի երթալուն կիպի տուն կուգայ,
քիւրքը կը հագնի կը նստի եղէր, թախ ուշ
վախիթ ... առ հէլպէթ ...

— Քա ան չէ ամա, ֆուլիկը ինչո՞ւ չեն
կրնար կոր կարգէր ...

— Փարա տան նէ առնող կըլլայ հէլ-
պէթ ...

— Ինչո՞ւ ... ես ըսին քի հարը Եէլ-տէ-
յիրմէնին երեք օտալը տունի մը տիրէկը ի-
լէն, տիրո պաղնիքին սրմա թասմալը նա-
լընները թըրախօմա կուտայ կոր տէյի ...

— Հա ամա գիտնալըս, աղջիկը կտորճիկ
մը խուսուրդու է եղէր ...

— Քա ի՞նչ խուսուրդ, դուն գիտե՞ս կոր...

— Հա ես, ամա չեկաք մարդու ըսէք,
եանի աղջիկ զաւակ է ...

— Վո՛ւյ մեղայ քար պերաններնուս, սը-
տեղը չորս պատին առան կը խորաթուինք
կոր ...

— Իմացածիս նայելով, աղջկանը մէջքը
թուլ է եղէր ...

— Հէ՞ ... չի հասկցայ ...

— Եանի գիշերները սահաթ պաշի դուրս
կ'ելլայ եղէր ...

— Էյ առ է նէ բան մը ըսել չէ, կանցնի,
կտոր մը սինամէքիով թուր չուռուպին
խայնաթմիշ ընեն խմցունեն նէ բան մըն ալ
չի մնար ...

— Էյ նաւըլ, երթամ տէ ըսեմ առ թէր-
թիպը ...

— Քա քուրուկ, ասանկ բաները խեր է,
կուղես նէ վաղը դնայ թարիֆ տուր ...

— Քա աման, կելլան իս մուխուֆճիի
տեղ կը դնեն տէ, երեսիս կ'ելլան պաղ պան
մը կընեն, կանի կրակ կը կտրիմ ...

— Էյ հա, հախ ուռիս, ինծի կուգայ քի
մօրը թապիյէթը միլայիմ է քիշ մը ...

— Քա նասըլ միլայիմ ... էտէպսիզ է
չէս կրնար կոր ըսեր ... օր մը դրացինը,
չամաշըրին չուլանը բերէր այլային տալին
իլիշտիրմիշ է ըրեր տէյի, մահալլէ մը հալիսը
գլոխը ժողվեց ...

— Վո՛ւյ ... ճըպըպըդ, սանքի ի՞նչ ալ
եռումուռնախ թապիյէթներ ալ կան, անանկ
է նէ, աղջկանը տակը քէչէ թող կապէ,
ինչ կուղէ նէ ան ընէ, ինչերնուս պէտք...
սա կրակը կտոր մը խառնեցէք քի միտքեր-
նիս մարդ իյնայ խորաթիւու ...

Հոս յիշենք թէ, այս կարգի մեծ պահքի
բամբասանքները անպատճառ կրակարանին
շուրջը կ'անցնին, և սովորութիւնը ան է որ,
երբ բամբասուրու նիւթերնին պակսի, կրակը
կը խառնեն, իբր թէ մտքերնին խառնելու
պէս և նորէն կսկսին բերան բանալ անոր
ասոր վրայ:

— Ան չէ ամա, կիւլիւկ հանըմը հարսին
չատ բան կը քաշէ կոր եղէր, բան մը իմա-
ցաք ... կ'ըսէ կիներէն մին բուռն մէկդի
դնելով, մինչ միւսները բոլորը մէկ ականջ-
նին կը տնկեն:

— Ո՞ր կիւլիւկը, սա անցած օր բաղնի-
քին մէջը մէշքը քաշել տուո՞ղը ...

— Ես հոն չէյի, ֆախաթ գիտնալս մէշ-
կէն սախաթ ըլլալու է քի, հարսին պիր
տիւզ չփեղ կուտայ եղէր ...

— Ը՛նհ ... հիմա անանկ կեսուրոջը
կունակը չփող հարս չիգայ բիացան ...

— Աման սուս եղիր տէ մտիկ ընենք նա-
յինք թողոտիան ի՞նչ կ'ըսէ կոր ...

— Հա, իմացածս սա է քի, մէյեր բոս-
տալ հարսը կէսուրը քիւթիւր քիւթիւր կը
ծեծէ եղեր տէ, էրիկն ալ անխտար կնկանը
վարտիքը մտե՞ր է քի, մօրը թառաֆ չեկա-
լէն զատ, դիմացը կ'անցնին եղէր տէ գահ
գահ կը խնդան, ղէֆքը կ'առնեն եղէր ...

— Վո՛ւյ բաթլամիշ ըլլայ հէմէն, վա՛յ

մեղքիս, ինձի ընելու է քի մութ վախի մաշան վրան կոտորում ...

— Մենք մի խորաթեր քուրուկ, հիմա ճուղկուն աղջիկները թիւռլիւ մըն են, մաշա չէ քի՝ ֆիսքիէ մը պիլէ զարնել չեն ի տար...

— Տահան կայ, էրիկը իրիկունները քիւլպաստիցու կը բերէ եղեր տէ, շան զաւակը վարը պիւրիւմ պիւրիւմ ըսխառային հոտերը տունն ի վեր կը հանէ, պատառ մը չիտար եղեր ...

— Էյ սուս եղիր քուրուկ, վրաս մարեւիք կուգայ կոր ...

— Տահա սահա ... իրեն աղտոտները կը բերէ կողք կը նետէ եղեր քի կեսուրը լուայ տէյի, ան սէրսէմն ալ առիկ ըլլայ տէյի թէքնէին տակէն աղին չի գար եղեր...

— Քա վայ մեղքիս, ատ ինչ պիչիւմ էրիկը բռնէր է քա ...

— Պագի էրիկմարդ ծուիկ կըլլայ, տլ գիտէ աշխարհիս մէջը կնկան երես չէ սեսեր նէ, ինքիզինքը խայիպ է ըրեր ...

— Երկու աչկը քէօնայ, անխըտար կըլլամ կոր քի, սա կընիկը օր մը բաղնիքը ըռասթ գամ տէ, նալընները բէշտիմա ին մէջը դընում, քիւթիւր քիւթիւր դրոշմում...

— Քա աման ինչ ուղ պէտք, Աստուած գայ հախէն, ատ պիչիւմը կընիկներուն համար կըսեն քի պոչ կունհնան տէյի ...

— Էյ աման դուն ալ ... նասըլ պոչ ...

— Հա եա, եաեաս ալ պզտիկ պոչ մը ունի եղեր տէ, կըսէին քի եաման բան է եղեր տէյի ...

— Ձեզի տաքը տաքընա բան մը տահա պիտի գուրցեմ, Նոյեմզարին սիւսը կը տեսնաք կոր ...

— Քա հա, աղեկ պաղիր ատ լախըռտըն, ուրկէ կընէ կոր, էրիկը ըսես նէ եալան չորպային մէկը, հէմ ութը մէճխոյէ տունի քիրա, տունին մէջն ալ օխտը հոգի ուսուլ, նասըլ տակէն կեւան կոր ...

— Ինձի հարցունելու ըլլաք նէ, մինակ էրկանը ուտելու ապուրը չէ ... ան տիւզէ իքինձի օւթախ մը ունի ան կընէ կոր ...

— Աման դուն ալ, կէս գիշեր սուռաթլըին երեսը ո՞վ կը նայի, աստեղը ինչ լուսունկայի պէս աղւորներ կան քի քէթթիւմի պէս տունը միացեր են ...

— Դուն տատարը գիտես ... լեզու մը ունի քի, վախիթ մը քուլի տուններին քիրածի էին տէ, զարգավթճիին հետ պիլէ ճիլվէլէլմիշ կըլլար քի տէմէթ մը մայտանուսը ճապա առնէ տէյի ...

— Վո՛ւյ, վայ մեղքիս, միտէն փախում...

— Էյ քա ո՞վ է աճապ սիրողը ... տուններին ո՞վ կը մանայ կեւայ կոր ...

— Տուններին մանող ելողները գիտում ամա, գիտնալըս դուրսը կը տեսնուին կոր, դէրէ Աստուծուն օրը սիւսը կուտայ դուրս կիյնայ ...

— Մէջը դուրսը դառնայ հէմէն, քա ամա էրիկն ալ բանկատու մարդ է ...

— Անյամ օր շաբա մըն էր դրեր քի, միտեմճիին պիլէ էլ մը կայնեցաւ աչքը վըրոն ձգեց, թամամ օխտը ըռնէ սիւսերով էր ...

— Ան ինտոր ալ չիշմանցեր է, զահէր օւթախը եարամիշ կըլլայ կոր ... քա մարիկ, էրիկ ալ ըսես նէ քիչ մը աչքը ֆըլտըր ֆըլտըր ըլլալու է, անանկ խառթ խոռոզի պէս առտուն քիւմէսէն ելլող տէ իրիկունն թառող ճինսն ալ բէք մախպուլ բան մը չէ...

— Տահան կայ, մէյէր տակէն ըռէնկլի բանթալօն կը հագնի եղեր, չորս մատ պլօստէլի ...

— Էյ աման զահէր օյինճի էր ասիկայ ... որի ...

— Պէս պէլլի սիրողին աչկին չիբին երեւայ տէյի, չէ՞ք հասկնար կոր ...

— Հիմաճուկուն կէնճէրն ալ օւթնոտեր են գիտես քի ...

— Սուրբիկին գլխուն եկածը իմացա՞ք...

— Քա չէ, նախ ըսէ նայինք, սա կըրա կը խառնեցէք քիչ մը ... հօ ... նայէ օսան պաղեր է ...

— Գիտէ՞ք եա, աղջիկը նշանեց նէ ...

— Հա, կեցիր նայիմ որի ... հա՛ իշլէմէճիի մը ...

— Իշտէ հա, անցած կիրակի իշլէմէճին մէկ թէլի վրայ հագուէր եկեր է քի աղջիկը Պէյօղլու տանի տէյի ...

— Էյ վայ կլխուս ...

— Հաւի կլոխ մարն ալ, հիմա ալաֆը դանկա է զարսը չունի ըսելով դրեր աղջիկը

Թէպիմ է ըրեր, երկուքը մէկ առապան նըստեք գացեր են ...

— Էյ Պէյօղլուն ինչ կայ եղեր քի ...
ժուր տարեր է, չի կրցա՞ր բան մը հասկցեր էիր ...

— Նասըլ ... մըտիկ ըրէ, իրիկունսս հաթը տասը, տասնըմէկ, տասներկուք, մէկ, մէկուկէս ... մարդ օւթան չիկայ ...

— Էյ վրաս մարկիք կուգայ կոր, սօղրամ ...

— Նէ իսէ, ֆէսֆէսէ, դող ըսելնիքէն, մէյ մըն ալ կը նայլա քի ետպանճի չօճուխ մը գիր մը կը պերէ քի, սօն վաքօւր փախցուցինք, աս գիշեր Պէյօղլու մնացինք տէյի...

— Քա վո՛ւյ ... էյ որի՛ն տունը մնացեր են ...

— Պէս պէլլի օթէլը ...

— Երկու աշուրնին քէօռնայ, ամա խապահաթ չունին, խապահաթը Սուրբիկինն է քի, երկու ճահիլը ձգեր է քի մինաւորիկ երթան տէյի ...

— Ան կընիկը խապահաթ չունի, հիմա՝ ճուկլան ճասալսզ աղջիկները մա՞ր մըտիկ կընեն քի, քիմ պիլիք ինչ առպէտա հանեց...

— Էյ ետքէն առտուն եկի՞ր են ...

— Գիտնալըս օղարսաքին եկեր են, ամա կըսեն կոր քի, առաջ աղջիկը տղուն վրայ տաք չէ եղեր տէ,՝ առ օրուընէ պէրի խենդ կելլայ կոր եղեր ...

— Անանկ կըլլա՞յ եա՛ ... քա ճանըմ ինչ տեղը կայ քի երկու ճահիլ հուլարսըզ ձգեմ ...

— Նասըլ հուլար, չիֆթ կէմը պիլէ կը բրցընեն կոր հիմաճուկուանները, դուն չունիս չիյտես տէ պօլ պօլ կը ճարթես կոր ...

— Քա էյ աղե՛կ եա՛ ... առոնք միս մինաւորիկ հօթելը կեցեր են նէ ...

— Հասկըցայ ըսածդ ամա, աղջիկը խուռնազ է, թըպիսը մօրը պէս ...

— Էյ քէզի բան մը ըսեմ քուրուկ, խապահաթը չըլլա մօրն է քի առ խրտսր երեմ է հանէր տէ, տղան ալ ճէստրէթ ըրէր առէր տարեր է, խաղայի ալ կան նէ միւսթահախ է, օ՛խ պիտի պօռամ եանի իմանամ նէ ...

— Կեցիր նայիմ զինս տաղըմիշ եղաւ, ինչ պիտի ըսէի ... հա՛, Փարիսը օրը երկու տնակա՛լ կը չընէ կոր եղէր, բան մը իմացա՞ք...

— Վայ կլիտ՛ւն ... էրիկը առտար կը վաստըլի կոր քի երկու մանկալ պիտի չինէ ...

— Տղուն համար կ'ըսեն կոր քի զէնկին կընիկ մը կը սիրէ կոր եղէր տէ, տունին զահրէն առ կընիկը կը շտկէ կոր եղէր ...

— Վո՛ւյ բաթլամիշ ըլլան հէմէն ... իշտէ առ աարոքներուն աղղընութիւնն է քի, կիւլի պէս աղջիկները աւելի պէս տունին պուճախը կը մնան կոր ...

— Էյ քանի՞ տարու կայ եղէր քի կնիկը...

— Վաթսունը անցուկ քա, քէօռնա աշկը ...

— Ութը չէ սատկեր տն է ... մեղայ, տահա իծծուն չիգամ ամա, արունս տուռուլմիշ եղած է, էրիկմարդ կը տեսնամ կոր նէ սիրտս կը խառնուի կոր ...

— Ը՛նհ ... ամէնքը մեղի պէս գիտես...

— Քա ան չէ ամա, մէյմը սահաթը նաշէյինք ... զէրէ բէք մութցաւ ...

— Էյ հայտէ ժողուըսուինք տէ կլլանք, դուք ալ մեզի հրամամեցէք, սանկ կը կծկուինք կը նստինք ...

* * *

Եւ կամ միս կուտէք պահք օրով, ճասը չունեն, դուք որ եկեղեցիին մարմար սիւները համբուրելու չափ քրիստոսեայ կը կլլեցընէք ինքզինքնիդ, աւելի լաւ է որ ըրգաք մը ծախէք և մեծ պահք օրով, օխան 14ի խըվըռճըս ուտէք, քան թէ՛ վաւարանին շուրջ անոր ասոր միւրը:

ԼԻԼԱ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ս. Դաւթեան այս շարթու հրապարակ հանեց իր դասագիրքերու ստուար շարքին 56րդ հատորը, որ աշխարհիկ լեզուի ամէնէն կատարեալ և խնամեալ Բերականութիւնն է:

Գործը ձօնուած է Աշխարհաբարի Գերաւիանութեան Հիմնադիր Մեծանուն Այաընեանի յիշատակին: Անոր գեղեցիկ Նախարանը, ինչպէս և Գրեղատականը հրատարակել առաջիկային վերապահելով՝ գործը կը յանձնարարենք հայ լեզուի ուսուցիչներուն:

ԳԻՆՆ Է 4 ԴԱՀԵԿԱՆ

Հասցէ. 47, Պապր-Ալի նասսեի
(Կագի ընկերութեան դիմ)

ՊԱՏՈՒԾ ԿՕՇԻԿԸ

[Պատմում]

Ճի՛շդ երկու տարի առաջ էր երբ դպրոցական շրջանս աւարտելով ելած էի վարժարանէն, խոշորիկ վկայական մը և քանի մը երկվեցեակ ալ ութիւն շալակս :

Ու ալ անկէ վերջ գործ մը գտնելու յոյսով՝ վաճառատունէ վաճառատուն պտըտեցայ, սակայն ո՛չ ոք կարեւորութիւն կուտար առած վկայականիս և ութիւններուս :

Այսպէս տրտում ու տխուր կը մտածէի թէ՛ եթէ վարժարանէն ելլելուս փոխանակ մէկ քանի ութիւնի՝ քիւրքիւն առած ըլլայի գոնէ հիմակ քիւրքիւնի մը խանութ բացած ըլլալով, կօշիկներս չէին մաշեր պարապ տեղը :

* * *

Հինգշաբթի մը, առաւօտուն չափէն աւելի կանուխ գացի Ղալաթիոյ եկեղեցին — սովորականէն շատ աւելի չիք —, աղօթելու համար Աստուծոյ որ հանգիստ գործ մը ցոյց տար ինձ :

Եկեղեցիէն մեկնելուս, ամենուն ըրածին պէս, ես ալ շիտակ քայլերս ուղղեցի դէպ ի Բարաքէօյի պողաչանին՝ ուր 10 փարայի սասե և 10 փարայի խրյմալը պողաչա ուտելէս վերջ՝ սկսայ ելքսէք-գալտըրըմէն վեր մագլցիլ, անշուշտ իմ անձնական կառքովս ! այսինքն ... ոտքերովս :

Ճամբան հանգիպեցայ աղջկան մը, որ ան ալ ինծի պէս եկեղեցիէն կը վերադառնար իր մայրիկին հետ :

Անոնք առջեւէս կ'երթային՝ ես ալ անոնց ետեւէն, որով ուղածիս պէս կը գիտէի աղջիկը :

Բաւական գէր էր և ինչ որ մարդուս աւելի ախորժակը կը բանայ, ունէր անա՛նկ սրունքներ՝ որոնք եթէ վառուէին՝ կրնամ ըսել թէ երկու ամիսի չափ բաղնիք մը կըրնային տաքցնել :

Սրունքները միայն դիտելով՝ դիւթուեցայ, կախարդուեցայ, մոգուեցայ, գինովեցայ, (ականջդ խօսի Պարսամեան) :

Անօթի, անյագ աչքերով կը գիտէի ու կը գիտէի անոր սրունքները, երբ նշմարեցի թէ այդ աղջկան կօշիկին մէկը ծակ էր և

ուրիշ երբեմն երբեմն գլուխը դուրս կը հանէր ճերմակ թուղթի կտոր մը : Ահա նոր և տարօրինակ տեսարան մը, կը մտածէի թէ ի՛նչպէս ծակ կրնար ըլլալ աղջկան մը կօշիկը որ գեղեցկութեան տիպար մըն էր :

Ամէն բան մոռցած ուշադրութիւնս սեւեռած էի դէպի այդ ծակը, երբ յանկարծ ըռորովին դուրս ինկաւ այդ թուղթի կտորը :

Անօթութենէ կատղած վագրի մը պէս՝ խոյացայ այդ թուղթին վրայ, առի զայն, բացի, նամակ մըն էր :

Ի՛նչ սիրբոյիզ, այս գիրը պիտի ճանչնայի, ուստի ուշի ուշով զննեցի, քննեցի, խորհրդածութիւններ ըրի և ստորագրութիւնը կարդալուս՝ իրօք տեսայ որ բարեկամիս՝ կօշկակար Աբիսողովին կը պատկանէր ատրկա : Նամակին պարունակութիւնը հետեւեալն էր :

« Անուշիկս, Օր. Բուբուլ,

« Կօշիկդ շինած ասեմս, սիրս չափեմ աւելի յուզուեցաւ, այն նուշի պէս աչքերդ, դեղձի պէս այտերդ, կեռասի պէս օրմերդ անբացատրելի, անմեկնելի սէր մը արբնուցի : սրժիս մեք, կօշիկդ համբուրեցի ու համբուրեցի, վարդի ջուր կը հոսէր . պաշտեցի զանկաւ, կ'ուզեմ քեզ հետ կարգուիլ, բայց օտակաին շաբաթը 10 դրուս կ'առնեմ, եթէ իժարե կ'ընես եկող շաբթու պաակուիմ :

Ապագային մեծ կօշկակար մը ըլլալով երջանիկ կ'ընեմ քեզ :

Ժպիսներուդ կարօս
Աբիսողով »

Ահաւասիկ, սիրելի ընթերցողներ, սիրահարութեան նոր ձեւ մըն ալ որ ապահովաբար ո՛չ ձեր և ո՛չ ալ այս սողերը գրողին միտքէն կ'անցնէր :

Նամակը կարդալով կը մտածեմ թէ մարդ ի՛նչպէս կօշկակար կ'ըլլայ՝ երբ այսքան աղւոր հայերէն մը գիտէ :

Ջարմանալի չէ :

Արհեստս որոշած էի : Կօշկակար պիտի ըլլայի : Եւ ի՛նչ աւելի սիրուն արհեստ քան կօշկակարութիւնը :

Դպրոցէն բաժնուած ժամանակս թէեւ շատ առաջարկներ եղած էին ինձ ու է արհեստի մը հետեւելու համար, սակայն քանի

որ վկայական մը ունէի ձեռքս, ինչո՞ւ արհեստի մը հետեւէի:

Կ'ուզէի վաճառականի մը, վաճառականի մը, քովիսն էր քով գրագիր ըլլալ: Եկուր տես որ առած վկայականիս ոչնչութեան պատճառաւ կոշկակար ըլլալու որոշում տուած էի: Է՛, ինչ ընենք, բազդի խնդիր:

Այսու հանդերձ կոշկակարութիւնը նետուելիք արհեստ մը չէ՝ մանաւանդ ինծիպէս ներուն համար, քանի որ արհեստիս բերմունքով շատ մը սրունքներ պիտի սեղմէի, շատ մը ոտքեր պիտի շօշափէի, գուլպային ծակ կամ պատռած ըլլալը պիտի հասկնայի, դեռ ինչէ՞ր ինչէ՞ր ...:

Ահա թէ ինչո՞ւ համար կոշկակար եմ այսօր: (*)

Ա. Ա.

ԱՌԱՋԻՆ ՍԵՐՍ

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՊՈԻՇՈՒԹԻՒՆՆԵՐԷՍ

[Խոսովանաբար գրուած]

Այն ասեմ դեռ ես պատանի մ'էի,
Տասն եւ ութ ամեայ ու շատ քնայի,
Միտք որո՞ւ ժամով առնու իրիկուն,
Յօին ուշախ մը կես փուն կես արբուն,
Աղւոր աղջիկ մը կանցներ փողոցին,
Կարծես փոշին մ'էր փախած հաւնոցին,
Սեւուկ յօնքերով՝ այսով կարմրուկ,
Կեռաս ցրքներով աչքով մարմնով
Ոչ գէր ոչ նիհար միջակ մըսով գէր,
Որուն Լօման իսկ անուշտ կըսէր կե՛ր,
Ան կանցներ կերբար քեքեւ խոշի պէս,
Ես կը նայէի միտք ապուշի պէս,
Կուրծք հարուստ երբեք չըթրու չէր,
Որ հասկցողին ... բերանը քրչէր,
Ալ գործս եր նոյն ժամերուն որո՞ւ,
Սպասել նայիլ բաց բերան խօսօջ,
Բայց կամաց կամաց բան մը կ'ըլլայի,
Ձեի գիտէր քե՛ խնդայի լայի,
Ձգացի քե ես զայն կը սիրէի,
Ու հոգով մարմնով ալ ասիւր էի,

(*) Սրունքի միտք այդքան փոխադրազ ես նէ՛: Ղաւթիոյ պողաչաճիին քովի մաս վաճառը աշակերտ կ'ուզէ: (Ծ. Խ.)

Մտածեցի վերջ տալ մնչկասակին,
Ձի ալ տեղը չէր ասանկ կասակին,
Վերջապէս օր մը ինչ ըրի չըրի,
Սերս յայնո՞ղ գիր մը ձեռքը դրի,
Ուր քափած էի խեղճ ճերմկոյիս
Ամբողջ պաշարը չը նայած պոյիս,
Խոսովանանքն եր կոյս արթիս բոցին,
Մոռցած փաշիս ախար ... ասանցին:

×

Հետեւեալ առնուն դարձեալ նոյն ժամուն,
Դացի կայնեցայ անկիւնը ժամուն,
Յուսացի քե՛ նե գրոյս անպատճառ,
Պիտք՝ փոխարինէր իրեն սիրոյ ճառ,
Մեկ մ'ալ անգիտէ խրճող մագերով,
Թուրումպաճի մը կուգար վագերով,
Երբ փուս հասաւ բռնեց օձիքս,
Ըսի, ի՞նչ կ'ուզես ես/ասս չը ձրգե՛ս,
Ըսաւ շան տղայ դուն ո՞վ կըլլաս օր,
Իմին կըրոջըս մեքքուկ կըրես կոր:
Ո՛հ այն ասեմ ես ըսի մըսովի,
Այս ի՞նչ պատեալի մեկուն սեր տուի,
Հասկցայ գործը վայ սասանայ չար,
Եկ տես որ չկար փախչելու ալ ճար,
Աղէկ տեսակէն կերայ մի քաթախ,
Որ զիս պառկեցունց շաբաթ մը եսթախ:

ԲԱՐՈՅՆԱԿԱՆ. — (Թէեւ ոմանք կը կարծեն թէ չուրիմ):

Ձգուեացե՛ք միտք առաջին սերէ,
Ձի առջի սերը միտք մարդս կերէ,
Կանխահաս սերը պատանիին յար,
Փորձանքներ բերէ անքիւ անհամար:
Սիրոյ մեջ նոյն իսկ եղեք խոհեմ լուրջ,
Որ վերջը չըլլաք բաշափուս կամ փուրջ:

Մնամ ուր որ կ'ուզէք
ԵՐՄՈՎ

Թուրումպաճի մէջ.

Ուղիւոր մը տեղէն կելլայ տարիքոտ կըսնոջ մը տեղ տալու համար: Երբ ասողին կուգայ, ոտքի կեցող մարդ մը անմիջապէս եւ լաւ տեղը կը նստի: Ելլողը բարկութեան շարժումներ կ'ընէ:

— Մի նեղանաք պարոն, կ'ընէ նստողը, այս կինը իմ զոքանջս է:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊՐՈՒՍԱ. — Եթէ Բերայի մէջ տի-
կիններն են որոնք էրիկմարդէ աւելի
թղթախաղին հոգի կուտան, հոս ալ
էրիկմարդիկները կիներէ աւելի Պրիչին
յարած են: Չորս ընկեր 32 ժամ ան-
ընդհատ Պռիչ խաղալով՝ չորսը մէկ ան-
կողին ինկան անցեալ շաբաթ գիշեր:
Թեւերնուն ցաւին համար վարժ մսսկոռ
մը կը փնտռուի:

ԱԶԴ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅ. — Նորութիւն-
ները և արտառոցութիւնները իրաբու
կը յաջորդեն հոս: Այս անգամ ալ խե-
լացի Աբրահամներէն ոմանք հան-
գիստ կեր ու խումէն յափրացած, սկը-
սած են ֆիլոսոֆի իրենց էգ ընկերուհի-
ներուն հետ: Տնօրէնութեան աչքին
11 թիւ ակնոց մը կը յանձնարարենք:

ՆՈՅՆ. — Սուտ է սուտ, ատանկ
բան չիկայ:

ՆՈՅՆ. — Կարծեմ հրամանքդ ա-
ռանձնաշնորհեալ ես և պաշտպանուած.
Եթէ հարկ ըլլայ երդում ալ կ'ընեմ:

ՍԿԻՏԱՐ. — Անցեալ օր ոչ տեղա-
ցի նշանած մը իրենին նուէր տալու
յարմար բան մը նոյն իսկ Բիկմալիօնին
մօտ չի գտնելով, տասը քաշ կլիւմե
թուղթը փաթթած տուն զրկած է:

ՆՈՅՆ. — Երեք եկեղեցիին համար
մէկ դպրապետ մը կարգելու գա-
ղափարը մշուշի պէս պատած է Թաղ.
Խորհրդոյ միտքը:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Թիւնէլին մէջի
կենցաղագիտական՝ այսինքն կնոջ մը
ներկայութեանը ոտքի վրայ կայնելու
սխալէմը, հոս տեղի շոգենաւներուն
մէջ ալ փորձող չիք միւսիւ մը անցեալ

իրինկուն վերջին շոգենաւին մէջ en
flagrant délit տիկնոջ գիրկը ինկաւ

ԲԵՐԱ. — Բարեկենդանի խրախճա-
նութեանց մէջ շաբաթ մը շարունակ
լուսցնող միւսիւներուն համար՝ որոնք
այսօր անկողնոյ կը ծառայեն «Տէր ո-
ղորմեայ» կը խնդրուի:

ՆՈՅՆ. — Վաճառականի մը գրա-
դիրը որ չորս լեզու գիտնալով հան-
դերձ, չորս տարի աշխատելէ վերջ
ամսականը չորս հարիւր զրուշէն վեր
չէ ելած, Թօգաթլեանին գիմելով կառ-
սօնութեան պաշտօն խնդրեր է:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Թերթիս տա-
րեմուտին առթիւ գաւառներէ խուռ-
ներամ հասնող բաժնեգիններու հաշ-
ուեյարդարութեան համար վարժ տո-
մարակալի մը պէտք կայ... փափա-
գողք կրնան գիմել մեզ ընդ փոյթ կէս
օրէն ժամ մը վերջ: Երկուշաբթի,
Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբ-
թի, Ուրբաթ, Շաբաթ և Կիրակի օ-
րերէն զատ:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Ստոյգ աղբիւրէ
մեզ կը հաւաստեն թէ՛ տեղացի տիկին
մը իր աղջկանը ճեմեղը շտկելու համար
մտադիր է ֆոսկո մը տալ Եէտի-գու-
լէի Ազգ. Հիւանդանոցին մէջ: Կար-
գադիր մասնախմբին ատենապետ կար-
գուած է կ'ըսուի՝ ծանօթ և գերահռչ-
չակ Աբրահամը:

Արտոստեր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅՐԱՅԵՐԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Բօֆաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը չահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց չիք եւ գիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք
քուլթով կը կատարուին: 50—28



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ խանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Չիկասանէ, Հնդկասանէ, Ճափաէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափէներ, ամերիկեան կօշիկներ, Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիլփիլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար:

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաքաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլթայթել:

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն գժուարահաճաճախորդները:

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-17

Շաքաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են: